

1999

[ Հայություն Ճիշտութեա ]

Հրատարակութիւն Անդքսօնի

ՈՒՐԻՇԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱՅ

ԱՌԱՑ ԱՐՏԱՍՈՒՔԻ ԵՆ ԼՈՅ ԼԻՆՈՒ




Երկրորդ տպագրութիւն

ԹԻՖԼԻՍ

Ե-լեհական տպարան «ՃԵՐՄԱԿ» բնկ., Մադարեսի փ.15.

1905

(97)



Հրատարակութիւն Ասլեքոսկի



# ԱՌԱՑԱՌՈՒԹԻՒՆ ԵՎ ԼԱՑ ԼԻՆՈՒՄ

Երկրորդ տպագրութիւն



72158-60


ԹԻՖԼԻՍ

Ելեմտառած տպարան «ՀԵՐՄԵՆ» բնկ., Մադարեան փ. 15.

1905

(94)

218 7163.



Ա.

Յիշաւի աղքատութիւնը դժուար, մինչև  
անգամ ծանր դշութիւն է. բայց եթէ մարդ մի  
քիչ աւելի խորը մտածէ, նորա հետ էլ կարելի է  
հաշտուել:

Աղքատների կեանքը պատմելուց առաջ,  
թոյլ տուր նկատել, սիրելի ընթերցող, որ աղքա-  
տութիւնն ունի իւր շատ վատ կողմերն էլ. այս-  
ինքն այն տեսակ կողմեր, որոնք սպանում են  
մարդուն, մեռցնում են նորա մէջ ամեն մի  
մարդկային զգացմոնք և միևնոյն ժամանակ ա-  
ռաջնորդում են նորան գէպի այն տեսակ գործեր,  
որոնց մասին շատ հարուստներ մտքներովն ան-  
գամ չեն կարող անցկացնել...։ Աղքատութիւնը  
պատճառ է լինում մի աւելի սարսափելի դրու-  
թեան—մուրացկանութեան. իսկ մուրացկանու-  
թիւնը ծնունդ է տալիս ամենատեսակ յանցանք-  
ների։ Սակայն չկարծես, ընթերցող, որ աղքա-  
տութիւնը միմիայն շարիք և նախանձ է յառա-  
ջացնում։ Ո՞չ, ընդհակառակը նա ունի իւր շատ  
ազնիւ ու լաւ կողմերն էլ։ Աղքատութեան այդ  
ազնիւ կողմը կարելի է հասկանալ միայն այն

✓ Дозволено цензурою 5 Мая 1905 г. Тифлисъ.

ժամանակ, երբ մարդ դուրս է գալիս փողոց և տեսնում է թէ ինչպէս աղքատի առաջ ցածանում և նուաստանում են այդ փարթամացած վաճառականները, այդ թէ զեղիգների կապալառուները, ոյդ սրիկայների և աւազակների որդիները, որոնք ծիծառում են աղքատի հագուստի, նրա կերածու խմածի վրայ... մինչդեռ նա մաքուր և անբիծ խղճմտանքով և վեհօրէն նայում է ուղիղ նոցաճակատին և շարունակում է ծամել այն հացի կտորը, որը նա աշխատել է իւր ճակատի քըրտինքով, և երբ նա գիշերը պառկում է իւր կոշտ անկողնի մէջ, նորա աչերը խփվում են այնպէս խաղաղ ու հանդարտ, ինչպէս անմեղ մանուկներինը։

Նայեցէք. արջը արջութիւնով, որ մի կատաղի գաղանէ, կուշտ ժամանակ երբէք չէ յարձակվում մարդու վրայ. բայց երբ նորա փորը քաղցած է, այն ժամանակ մարդն էլ չէ ազատվում նորա ահռելի ճանկերից։ Այդպէս է նուև մարդը. ինչքան էլ հեղ ու բարի լինի նա, բայց եթէ փորը դատարկ է և ուտելու ոչինչ չկայ, վստահ եղէք որ քաղցածութիւնը կըստիպէ նորան նոյնպէս կատաղի և շար լինել, ինչպէս ամեն մի վայրենի գաղան։

Ահա մի փոքրիկ պատմութիւն, որը կարող է ապացոյց լինել այդ խօսքերի ճշմարտութեան։

Մեր փոքրիկ քաղաքում ապրում էր Տանչօանունով մի մարդ. նա այնքան քրիստոնեայ ու բարի մարդ էր, որ ճանճին անդամ խիղճը չէր

տալիս սպանել։ Ինչու համար սպանել, ասում էր նա, չէ որ նա էլ Աստծու արարածն է, նա էլ կամենում է ապրել այս լոյս աշխարհքի վերայ, նա էլ ունի իւր հոգսերը, իւր ձագերը... նա մեղ հետ ոչ մի հաշիւ չունի և եթէ մէկ մէկ կծում է՝ չէ որ նա անասուն է, իսկ մենք բանական արարածներ...։ Այդ պատճառով—շարունակում էր Տանչօն—փոխանակ ճանճին ամեն օր սպանելու և այդպիսով սովորեցնելու մեղ արիւնչեղութեան, աւելի լաւ է բռնել և բաց թողնել մի որ և իցէ տեղ... Աշխարհքը շատ ընդարձակ է և եթէ մեղ համար տեղ է գտնվում, հաւատացէք որ ճանճի համար էլ մի փոքրիկ անկիւն կը գտնուի... Ճանճից մեղ ոչ մի վնաս չկայ. մեր վնասը դարձեալ նոյն մարդիկներից է, որոնք եթէ ապրէին՝ ինչպէս որ վայել է բանական արարածին, այն ժամանակ այլ ևս շան նման մէկ մէկու միս չէինը կը ծոտիլ։

Ահա մի այդպիսի սուրբ, մի այդպիսի սքանչելի մարդ է՞ Տանչօն. նորա նմանը գծուար թէ մի ուրիշ տեղ էլ կարելի լինէր գտնել։ Ամբողջ օրը, առաւօտից մինչև երեկոյ նա աշխատանքից հանգիստ չէր առնում. կամ այգին էր փորում, կամ արտն էր հերկում, կամ փայտ էր կոտորում և կամ վերջապէս կնոջն էր օգնում։ Աստուածապարգել էր նորան մի հեղ, աշխատաւոր, սիրուն և չինարի ծառի նման բարեկազմ կնիկ. Թէ ինչքան հաշտ էին ապրում նոքա իրար հետ՝ այդ

ասել անգամ գժուար է, ուր մնաց որ նկարագրել. մէկ խօսքով նոքա ապլում էին ինչպէս երկու աղաւնեակներ:

— Օդնիր ինձ, աղաւնեակս, այդ ցանկապատը կարկատելու, ասում էր Տանջօն:

— Այս րոպէին, հոգեակս, պատասխանում էր Դօնան, և երկուսը միասին սկսում էին ցանկապատը կարկատել: — Դօնափ մտքով անգամ չեր անցնում որ այդ կնկայ գործ չէ. նորա համար այն էլ բաւական էր որ այդպիսով նոցա պարտէզգը կամ այգին աղատուած կը լինեն օտար եղների կամ գոմէշների յարձակումից:

— Դու կրակը վառիր, հոգիս, իսկ ես երեխաների շորերը կը հագցնեմ, ասում էր ուրիշ անգամ Դօնան, և Տանջօն արդէն պատրաստ էր:

Ահա ձեզ կեանք, ահա ձեզ ապլուտոտ: Ես կը ցանկայի որ ամենքն էլ այդ տեսակ ապրէին...:

Աստուած նրանց չէր զրկել նաև երեխաներից: Մէկի-երկուսի փոխանակ նա նրանց պարգևել էր հինգ հատ սիրուն, վառվուն ու խելօք երեխաներ: Սրանից աւելի էլ ինչ կարելի էր խնդրել Աստծուց: Եւ յիրաւի շատ անգամ Տանջօն ինքը ասում էր իւր կնոջ. «Դօնա, փառք լինի Արարշին, նա ինձ ամեն բան պարզեց է—քեզ նման կին, հրեշտակի նման ուրիներ, էլ աւել ոչինչ չեմ ուզում ես նորանից—»:

— Ես էլ շնորհակալ եմ Աստծուց, ասում էր Դօնան և եթէ մեր այդ աղքատութիւնը չըլինէր,

այն ժամանակ աշխարհիքի բոլոր թագուհիներից ես ինձ աւելի երջանիկ կը համարէի:

— Մնաւ արա, այ կնիկ, զուր տեղը մի տըրտնջիր, ձայնը բարձրացնում էր Տանջօն, էլ ո՞ր օրուայ համար են մեր ձեռքերը, մեր գլուխը և առողջութիւնը... թող մենք աշխատենք, այն ժամանակ ոչ մի բանի պակասութիւն էլ չենք քաշիլ:

Դօնան լուսում էր և սրտի խորքերից դառն հառաջներ քաշելով, գլուխը քաշ գնում էր երեխաների մօտ...:

— Մայրիկ, դու դարձեալ լաց ես լինում, հարցնում էր մանուկներից մինը:

— Ոչ, որդեակս, լաց չեմ լինում—խաբում էր մայրը:

— Մայրիկ, ինչու ես սուտ ասում, չէ որ դու ինքդ մեզ ամեն օր խրատում ես որ սուտ չասենք, որ սուտ ասելը մեզք է: Եթէ լաց չես լինում, հապա որտեղից են այդ արտասուքները:

— Մայրիկ ջան, լաց մի լինիր, մայրիկ ջան, արտասուք մի թափիր, հապա մէկ ծիծաղիր...:

Տանջօն մտիկ էր տալիս այդ ամենին և սիրտը չէր կարողանում համբերել. նա տրտմութեամբ գլուխը թափ էր տալիս և վազում էր տէր Պօղոսի մօտ, որ իրենց տան մօա էր ապրում և որը իրեն նման մի աշխատասէր, խելօք և բարի մարդ էր: Ամեն անգամ նա տէրտէրին դտնում էր աշխատանքի վերայ—կապան հագած,

մազերը խճճուած, ձեռքերը ցեխոտ, ամբողջ  
մաշմինը քրտինքի մէջ կորած:


— Օրհնեա տէր, ասում էր Տանչօն—ի՞նչպէս  
ես տէր հայր, գործերդ ի՞նչպէս են:

— Փառք տէրին, պատասխանում է լոտէր Պօ-  
դոսը, շնորհակալ եմ աստուածանից որ գեռ  
այնքան ոյժ ու առողջութիւն է թողել իմ մէջ  
որ կարող եմ բան անել: Եթէ մարդո առողջ է,  
որդի, ամեն բան էլ լաւ է առաջ գնում. կեան-  
քըն էլ այն ժամանակ աւելի թեթև և աւելի  
ուրախ է անց կենում: Մենք ամենքս, որդի,  
ստեղծուել ենք աշխատելու, մեր հացը մեր երե-  
սի քրտինքովը ուտելու համար: Այդ պատճառով  
միմիայն նա է ճշմարիտ երջանիկ և ազնիւ մար-  
դոր, ով որ աշխատում է, իսկ ով ոչինչ չէ ա-  
նու, այլ միմիայն լափում է օտարի աշխատան-  
քը... այդպիսիների մասին իսկի խօսելէլ չարժէ: Ահա  
ես քահանայ եմ, շարունակում էր նա և  
ինձ չէր վայել այդպէս շաղախուել ցեխի ու փո-  
շու մէջ. բայց ի՞նչ պէտք է արած: Ես կարծում  
եմ, որ ամեն մարդ պարտական է տանել իրեն  
բաժին ընկած զրկանքները ու պարտականու-  
թեան ծանրութիւնները, և թէ աշխարհքի մէջ  
չկայ մի այնպիսի ցած պաշտօն, որը կարելի չը  
լինէր բարձրացնել, եթէ միայն ամեն մարդ լի-  
նէ՛ ազնիւ և ազնուութեամբ կատարէր իւր բո-  
լո՛ պարտականութիւնները:

Տէր Պօղոսի խօսքերը միսիթարում էին Տան-

չօին և նա ուրախ ու երջանիկարտութեամբ նում  
նում էր տուն:

— Ահա այդ գերեզմանի գուռը հասած ծե-  
րունին, ամբողջ օրը՝ առանց հանգիստ առնելու  
աշխատում է, մտածում էր Տանչօն. իսկ ես՝ որ  
աւելի երիտասարդու առողջ եմ, յուսահատուում  
եմ. ոչ, հարկաւոր չէ տիրել, Աստուծով ամեն  
բան լաւ առաջ կերթայ:



Եւ Տանչօն նորից սկսում էր աշխատել, նո-  
րից ամբողջ օրը գլուխը բանից չէր բարձրաց-  
նում...: Ահա երեկոյեան մութը տարածուեց  
երկրի վերայ, ահա պայծառ աստղերը մէկմէկու  
ետենից վառուեցին կապոյտ երկնակամարում.  
ահա և բոլորակ լուսինը բարձրացաւ անտառնե-  
րի և սարերի քամակից և իւր մեզմ ճառագայթ-  
ները անդրագարձնելով գետերի հօսանքների մէջ,  
նոցա բոլոր երկայնութեամբ ձգեց լուսաշողող  
ակօսներ: Մասդկային ազմուկները և ձայները  
տեղի տուին խորին լուսութնան և միմրայն շներն  
ու գիւղական եղներն են, որոնք իրենց հաջոցով  
կամ բառաշխնով երեմն երեմն վրդովում են  
այդ գերեզմանական լոռուինը: Բայց Տանչօն  
գեռ շարունակում է աշխատել. նա գեռ գլուխը  
գործից չէ հեռացնում: Աշխատելը ի հարկէ ո-  
չինչ. բայց թշուառութիւնը այն է, երբ մարդ  
աշխատում, արիւնքրտինք է թափում և այդ  
աշխատանքից ոչ մի պտուղ, ոչ մի արդիւնք

չէ դուրս դալիս... ահա թէ ինչն է մարդուս  
մէջը կոտրողը:

Գիշերը անցաւ և ոսկի արշալոյսը հազիւ  
սկսել է կարմրատակել արևելքում: Տանջօն վեր  
է կենում և ուղեսրվում է արտը: Թօնան իւր  
մարդուն ճանապարհ դնելով, վերցնում է ճա-  
խարակը և մի կողմից գործում ու զուարճանում  
է իւր քնած մանուկներով. իսկ միւս կողմից ար-  
տասուքի կաթիլները կարկուտի նման թափփում  
են նորա աչքերից. մէկ-մէկ նա իւր արտասուա-  
լից աչքերը ձգում է եկեղեցու խաչին և երեսը  
խաչակնքելով կանչում է «Տէր Աստուած, դու  
իմ երեխաներին սովից չմեռցնես, դու քո ողոր-  
մութիւնիցդ մեզի չզրկես: Մենք խեղճ մարդիկ  
ենք, բայց անազնիւ չենք. մենք ինքներս չունենք,  
բայց ուրիշների ունեցածի վերայ էլ աշք չենք  
տնկում: Մենք քեզանից շատ բան չենք խընդ-  
րում. տէւր մեզ միայն այնքան՝ ինչքան որ հար-  
կաւոր է ապրելու համար»:

Տեսնելով մօր այդ տանջանքները Զլատօն,  
Թօնաի մեծ աղջիկը, շատ անգամ աշխատում էր  
մխիթարել նորան: «Մայրիկ, լաց մի լինիր, ա-  
սում էր նա, կան մարդիկ՝ որոնք մեզանից էլ  
աղքատ են. բայց նոքա էլ ապրում են... ինչ  
հարկաւոր է այդքան վիշտ քաշել», ասում էր,  
բայց իւր սիրտն էլ վշտով ու դառնութեամբ  
լեցուած էր. աղքատութեան տանջանքները նորա  
սքանչելի գէմքի վերայ էլ դրել էին այն տեսակ

կնիքներ, որ նորա վերայ նայողը կը կարծէր թէ  
նա մի կենդանի մեռեալ է: Այդ ժամանակ Զլա-  
տօն տասն և եօթը տարեկան էր. ուստի չէր  
կարող իւր ծնողների գրութիւնը չհասկանալ:  
Հրեշտակային բարութեամբ լեցուած էր այդ  
աղջկայ սիրտը, և ինչեր ինչեր չէր քաշում նա  
իւր եղբայրների և քոյրերի սիրոյ համար: Նա  
կարծես միանդամայն մոռանում էր իւր անձը,  
մոռանում էր իւր սեփական վիճակը և ամենա-  
տեսակ փաղաքանքով և սիրող կնոջ յատուկ  
խորամանկութիւններով աշխատում էր գոնէ մի  
առժամանակ, գէթ մի բոպէ մոռացնել տալնաե  
իւր լնտանիքին: Նա ծածուկ ողորմութիւն էր  
իննդրում, որ կարողանար հաց ճարել և երեխա-  
ներին կերակրել: Շատ անգամ նա իւր բաժին  
հացի կտորը պահում էր նոցա համար, և այդ-  
պիսով մի քանի օր շարունակ իրեն զրկելով, հա-  
զիւ կարողանում էր ոտքի վրայ կանգնել: Երբոր  
նա տնից դուրս էր գալիս որ գնայ ողորմութիւն  
խնդրէ, և համնում էր որ և իցէ դրան՝ նա եր-  
կար ժամանակ կանդ էր առնում այդ դրան ա-  
ռաջ և աչքերը ձգում էր պատուհանների վերայ:  
Ընտանիքի սէրը և ամօթխածութիւնը սկսում էին  
ալեկոծել նորա կուսական սիրտը. Նա լնկնում  
էր մոռացութեան մէջ. վիշտը և դառնութիւնը  
տիրապետում էին նորան և աղի արցունքները  
հեղեղի նման սկսում էին վաղել նորա սքանչելի

— 12 —

աչքերից. նա ամաչում էր և սաստիկ ամօթ էր քաշում...:

Բ.

Առաւօտ է: Երեխաները սկսում են վեր կենալ: Ճանճը կծում է մէկի քիթը. նա տեղից վեր է թռչում և այդ ժամանակ ոտքը կպչում է միւսին. այդ միւսն էլ զարթնում է: Զարթնում են նոքա ամենքն էլ քաղցած, պատառոտած շապիկների մէջ և մէկ-մէկ սկսում են գուրս սողալ հնամաշ կապերտի տակից, որի տակ ընած էին: Եւ առաջին խօսքը որ գուրս է գալիս նոցա բերանից, առաջին բառը որով դիմում են նոքա իւնց մօչը, այս է. — Մայրիկ, հաց տնւր — ասում է մէկը:

— Մայրիկ, քաղցած եմ... ուտել եմ ուզում, կանչում է երկրորդը:

— Մայրիկ, մենք երեկ էլ ոչինչ չենք կերել, գանգատում է երրորդը:

— Մայրիկ, փորս ցաւում է, լաց է լինում չորրորդը...:

— Սպասեցէք, որդիներս, սպասեցէք, աղաւնեակներս, այս բոպէին հացը կըթխուի և ես ամեն մէկիդ մի մի ահագին պատառ կը տամ, ասում է մայրը:

— Իսկ հացը շուտով կը թխուի մայրիկ, մենք քաղցած ենք, շարունակում են մանուկները:

— Շուտով, հոգեակներս, շուտով. ահա հայ-

րիկը կը դայ և միասին հաց կուտենք. նա դընացել է ջաղացպանից ալիւր պարտք առնելու. այս բոպէին կըթերի և ես ձեզ համար այնպէս հաց թխեմ որ քէֆներդ դայ...:

— Մայրիկ, գոնէ օթեկ հաց տուր, գոնէ փշրանք տուր... հայրիկը ինչու այդքան ուշանում է... մենք այնպէս էինք կարծում որ հացը արդէն թոնիրումը թխուում է... Տէր Աստուած, ինչ է անում հայրիկը այդքան երկար ժամանակ, ինչու չէ գալիս .. ասում են երեխաները և ամենքը միասին սկսում են լաց լինել. լաց է լինում և Դօնան...:

Այդ խեղճերի վերայ նայելիս ամեն անգամ իմ սիրտս տակնուվրայ էր լինում. մենք ինքներս թէկ հարուստ չէինք, բայց Աստծու տուածից նրանց էլ բաժին էինք հանում: Իսկ հարուստները... մեզանում թէկ շատ հարուստներ չկային, բայց կային ունեորներ, որոնք կարող էին օգնել աղքատներին: Սակայն այդ ունեորները ժամանակ չունէին չունեորների մասին մտածելու: Եւ յիրաւի, նոքա բոլոր ժամանակ զբաղուած են կամ առեւտրական հաշուով, կամ հիւրեր ընդունելով, կամ վերջապէս ծանր աշխատանքից դադրած պառկել են քնելու. Էլ երբ կարող են մըտածել որ կան աղքատներ, որոնք սովից ու ցըրտից լալիս ու հեծում են: Է՞հ, արժէ արդեօք խօսել անգամ նոցա մասին. առածը շատ լաւ է ասում է, թէ «կուշտը քաղցածին մանր կը բրդէ...»:

Մեր մօտ սովորաբար ահա թէ ի՞նչ է նըշկատուում: Ամեն մի հայ քանի որ նա դեռ աղքատ է, կամ քանի որ ոչ մի պետական պաշտօնի մէջ չէ գտնուում—նա բարի է, նա իւր բարեկամին. իւր հայրենակցին կարօտութեան մէջ թողնող չէ. նորա դուռը միշտ բաց է խնդրողի առաջ և նա միշտ պատրաստ է բաժանել իւր չոր հացի պատառը, իւր աղի պանրի կտորը չունեցողի հետ. բայց հէնց որ մի քիչ հարստացաւ, նա բոլորովին փոխուում, ուրիշ մարդ է դառնում:—Հայ քաղաքացի էֆէնդին այդ մի տեսակ արարած է, որի ամբողջ էութիւնը լեցուած է ագահութեամբ և արծաթսիրութեամբ. անդութեամբ և արհամարհանքով դէպի իւր եղբայրները, դէպի իւր աղքատ հայրենակիցները: Մինչդեռ գիւղերում, որտեղ հայր անձանօթ է այդ տեսակ էֆէնդիների հետ, նա աւելի խաղաղ և երջանիկ է ապրում. այդտեղ նորա կեանքը, հոգին շատ հազիւ անգամ է վարակվում մարդկային աղտոտութիւններով:

Վերջապէս Տանջօն վերադարձաւ տուն. ամենքը գուրս եկան նորա առաջը»

—ի՞նչ է հայրիկ, ուր է հացը... հաց տնւր, քաղցած ենք, ասում է մէկը:

—Հայրիկ, հայրիկ, ոտքերս թուլանում են, ասում է միւսը:

—Սպասեցէք որդիներս, սպասեցէք աղաւնեակներս, այս բապէին ձեզ համար հաց կըբեւ

րեն, պատասխանում է Տանջօն:

—ի՞նչ արաւ ջաղացպանը, Տանջօ—չը տուեց—հարցնում է կինը:

—Չտուեց, կամացուկ պատասխանում է Տանջօն:

ի՞նչպէս թէ չտուեց, այդ անկարելի է...միւթէ չը տալիս... ի՞նչ ես ասում, Տանջօն:

—Ասում եմ որ չտուեց. մարդը չէ տալիս էլի՛, պրծաւ գնաց:

—Բայց այդ անկարելի բան է. երեկի չունէ որ չէ տալիս: Նա բարեսիրտ ծերունի է, և չէ կարող մոռանալ քո նորան արած բարիքը: Զէ՞ որ գու նորա ջրաղացի թումբը նորոգեցիր, երբ որ գետը քանդել էր նորան:

—Ոչ, սիրելիս, բարիքը շուտ է մոռացվում, մարդիկ չեն յիշում, կամ չեն ուզում յիշել բարիքը. միմիայն չարիքն է որ նրանք յաւիտեանս յաւիտենից չեն մոռանում: Ջաղացպանը ասում է «գու առանց նորան էլ ինձ շատ ես պարտական. իսկ փողը վճարելու մասին ամեններն հոգս չես անում. կորիր, գնա, ես թագաւոր չեմ, և իմ ջաղացս էլ շտեմարան չի»: Ահա, սիրելիս, թէ ի՞նչ պատասխան առեց նա:

—Ուշեմն ի՞նչ անենք, աղաղակում է Դօնան, ով Աստուած, մենք այստեղ ներքեումը քաղցածութիւնից մեռնում ենք. իսկ գու այստեղ վերեւումը նստած մեր վերայ չես էլ նայում. գու հոգս ես քաշում միմիայն հաշուստների, այդ

կատաղի գաղանների մասին։ Ո՞չ դու անիրաւ  
ես, Աստուած, եթէ դու արդար լինէիր, աշխարհքը  
այդպէս չէր լինի։

— Մի տանջիր, այ կին, գոռում էր Տան-  
չօն, քո սիրտդ դառնացած է. ինքդ էլ չես հաս-  
կանում թէ ինչ ես դուքս տալիս...։ Սպասիր և  
կը տեսնես թէ ինչպէս Աստուած մեզ կողորմէ։  
Աւելի լաւ է նստենք և խելք խելքի տուած մը-  
տածենք թէ ինչպէս և որտեղից հաց ճարենք։

— Լաւ միտս ընկաւ, ասում է Թօնան, վեր  
առ ահա իմ նշանի մատանին, նա ոսկուց է, տար  
ծախիր ու հաց առ։

— Ո՞չ, սիրելիս, այդ անկարելի բան է. ես  
երեք այդ չեմ անել. ես չեմ կամենում որ մեր  
ծնողները գերեզմանից դուրս գան և յայտնեն  
աշխարհին թէ մենք անհաւատարիմ ամուսին-  
ներ ենք։ Ես որտեղից որ է հաց կը ճարեմ. մի-  
այն թէ դու երեխաներին տար այգին. թող այն-  
տեղ արեի տակին տաքանան և մի քիչ խաղով  
լինեն, մինչեւ որ ես վերադառնամ։ Այս ասելով  
Տանչօն դուրս եկաւ փողոց։

Թօնան երեխաներին տարաւ այգի և սկսեց  
խաղով անել նշանց։ Իսկ այդ ժամանակ Տանչօն  
նորից կամացուկ մտաւ տուն և գողի նման վա-  
խենալով որ նորան չը տեսնեն, վերցրեց հին  
ձեռագիր աւետարանը՝ որը պապերից էր մնացել  
և յարգվում էր իրեն տնային սրբութիւն, և  
դարձեալ կամացուկ դուրս եկաւ փողոց։ Մէկ

ժամ չանցած Տանչօն նորից վերադարձաւ բերե-  
լով իւր հետ ալիւր, հաց, աղ և մի քիչ էլ պա-  
նիր։

— Ահա, սիրելիս, մի ամբողջ շաբաթուայ  
պաշար, ասաց նա։ Այս անդամ էլ Քրիստոս ե-  
րեխաներին սովամահից փրկեց։

Երեխաները այժմ կուշտ են. բայց չը որ  
նոքա մանուկներ են, խաղ են անում, վազվառ-  
են և մի ժամ անցած չանցած նորից սկսում են  
հաց պանիր խնդրել։ Ահա նոքա վերադարձան  
տուն և նոր գանդատներով կպչում են գուշեալ  
իշենց մօրը։ Այս, մայրիկ, մեր տանը աւելի  
ցուրտ է քան թէ դրառում, այնտեղ գոներ գործ-  
տաքացնում ու լուսաւորում է. իսկ այստեղ—  
տես, ինչպէս մութն է, ինչքան ցուրտ է...։



Եւ յիրաւի, եթէ այդ փոքրիկ ու խոնաւ  
խրճիթը փոքր ինչ չը լուսաւորուէր երդիկի ծա-  
կից և պղտիկ պատուհանից, այն ժամանակ ան-  
կարելի կը լինէր մինչեւ անդամ մէկմէկու երես  
տեսնել։ Մնացած երեք պատուհանները ծածկած  
էին զանազան ցնցոտիներով և յարդով որպէս զի  
գիշերուայ ցուրտը ներս չըմտնէ. արդէն փետրը-  
ուար ամիսն էր։ Միւս երկու սենեակը տանող  
գոներն էլ նոյնպէս փակուած էին։ Տան մէջ  
բացի փայտեայ պնակից և փոքրիկ պղնձից ոչ մի  
այլ աման, ոչ մի ուրիշ զգեստ կամ անկողին չէր  
երեւում. կար միայն մի պատառուած կապերտ,

որը ամբողջ ընտանիքի համար թէ անկողնի և  
թէ վերմակի կրկին պաշտօնն էր կատարում։

գ.

Մէկ անդամ Տանչօն դուրս եկաւ փողոց և  
շատ շանցած ուրախ և ծիծաղը երեսին ներս  
ընկաւ տռւն...

— Ե՞ն, սիրելիս, Աստուած աղքատներին  
երբէք աչքից չէ ձգում, ես այդ հազար անդամ  
ասել եմ քեզ... շնորհակալ եմ նորա ողորմու-  
թիւնից. օրհնեալ լինի իմ վիճակը։ Ինձ գործ են  
տալիս, շատ լաւ գործ. երկու երեք օրից յետոյ  
ես պէտք է ճանապարհ ընկնեմ։

— Ի՞նչ գործ... ուր, Տանչօ, — հարցրեց Դօ-  
նան։

— Ինձ ամսական խոստանում են Հարիւր  
զրուշ... հասկանում ես, Հարիւր զրուշ, այդ քիչ  
քան չիմանաս, մի ամբողջ գանձ է։

— Բայց ով է քեզ գործ տուաղը... ուր ես  
ուզում գնալ։

— Գործ տուողը էֆէնդին է. ես պէտք է  
գնամ նորա համար ոչխար առնելու, հասկացմար։  
Եւ Տանչօն ուրախութիւնից սկսեց համբուրել. ե-  
րեխաներից մէկին միւսին. ինչպէս երեսում է նա  
շափաղանց ուրախ էր...։

— Ե՞րբ ես ուզում ճանապարհ ընկնել, հո-  
գիս, — հարցրեց Դօնան։

— Թէկուզ էգուց. ինչքան շուտ այնքան լաւ-  
դնա, սիրելիս, ճանապարհի պատրաստութիւն  
աես։

Դօնան գնաց իւր մարդու միակ շապիկը  
լուանալու և ճանապարհի համար մի թեթև  
պատրաստութիւն տեսնելու. իսկ Տանչօն դուրս  
եկաւ տնից և ուզեօրուեց Ապրօ էֆէնդիի մօտ,  
որ առաջուց մի քիչ փող վերցնի նորանից կնկա-  
նը ու մանուկներին թողնելու համար։ Ապրօն  
շատ ժլատ մարդ էր. նա իւր քսակի բերանը շատ  
դժուարութնամբ էր բաց անում. այդ պատճա-  
ռով նորանից փող դուրս քաշելը հեշտ բան չէր.  
մի խօսքով — վաշխառուի կատարեալ տիպ էր։  
Երբոր Տանչօն մտաւ նորա մօտ, նա գլուխը  
ծանրութեամբ բարձրացնելով հարցրեց — «Հը,  
ի՞նչ է, Տանչօ, երբ ես ուզում ճանապարհ ընկ-  
նել»։

— Հենց որ տնային գործերս մի քիչ կարգի  
բերի՝ իսկոյն ճանապարհ կընկնեմ, պատասխանեց  
Տանչօն։ Ես ինքս էլ ուզում եմ ինչքան կարելի  
է շուտով տնից դուրս գալ. բայց, դեհ, ընտա-  
նիք կայ, կին կայ, երեխաներ կան. հարկաւոր է  
մի կերպ նրանց էլ կարգի դնել. շնքիս վրայ մի  
ամբողջ տուն կայ ընկած. թէկ խեղճ տուն, բայց  
էլլի տուն է...։

— Եամտ լաւ, ասաց Ապրօն, ի՞նչ որ անելու

ես, շուտով արա վերջացուը և Աստուծով շուտով  
ճանապարհ ընկիր:

—Ես ինքս ուրախ կը լինէի որ ամեն բան  
շուտով վերջանար, բայց հանդամանքները չեն  
ներում, պատասխանեց Տանչօն և մինչեւ ականջ-  
ները կարմրեց:

—Տանչօ, ինչպէս տեսնում եմ սրտումդ մի  
փառ բան կայ. եթէ ասելու ես, շուտ արա ասիր,  
ասաց Ապրօն:

—Սովամահ լինելու երկիւղից աւելի ի՞նչ  
փառ բան կարող է լինել աշխարհքում, ընդհատ-  
ուող ձայնով արտասանեց Տանչօն:

Ամեն մարդ հեշտ կարող է երևակայել թէ  
ի՞նչքան ծանր էր նորա համար պարագ ինդրել  
իւր տիրոջից: —Ես և դու, սիրելի ընթերցող, մեք  
էլ թերեւ շատ անդամ այդ միւնոյնը զգացել  
ենք, թէև այնքան էլ թշուառ չենք եղել ի՞նչպէս  
Տանչօն: Իսկ գալով քաղցածութեան, դու, ըն-  
թերցող, հաղիւ թէ կարողանաս կենդանի կեր-  
պով երևակայել այդ զգացմունքը. ուրեմն իմա-  
ցած եղիր թէ կան մարդիկ՝ որոնք նախանձով  
են նայում, երբ մէկի ձեռքին տեսնում են մի  
կտոր սև հաց...: Ես ինքս շատ անդամ տանջ-  
ուել եմ այդ անողորմ սովից, այդ պատճառով  
կարող եմ ասել, որ թէև աղքատութիւնը շատ  
անպիտան, շատ տանջելի դրութիւն է, բայց  
ուրիշից լինդրելը, հացի համար ուրիշին ձեռք

կարկառելը ևս առաւել անպիտան, ևս առաւել  
տանջելի է:

—Ես, շարունակեց Տանչօն, աւելի և աւելի  
կարմրելով, եկել եմ խնդրելու... մի քիչ փող...  
չես կարող արդեօք ռոճկիցս գոնէ մի հարիւր  
դրուշ կանխիկ փոխ տալ. թէ չէ չը գիտեմ ի՞նչ  
պէտք է անեմ: Այդ խօսքերը արտասանելով, Տան-  
չօն տերեկի նման սկսեց դողդողալ: Եթէ մէկը  
այդ բոպէին նայէր նորա դէմքին, անշուշտ այն-  
պէս պիտի կարծէր որ նա ոչ թէ փող է պարտք  
ուզում, այլ որևէ ծանր յանցանքի համար թո-  
ղութիւն է խնդրում:

—Ի՞նչպէս չէ... ռոճկից... կանխիկ... կան-  
չեց Ապրօ էֆէնդին և սկսեց ոտերը գետնին զար-  
նել: Ասա խնդրեմ, իսկ ես ումից կարող եմ կան-  
խիկ փող վերցնել. հազար ներողութիւն, ես քեզ-  
պէսներին շատ լաւ եմ ճանաչում. ես շատ լաւ  
գիտեմ որ քեզ նման աղքատները փողը կան-  
խիկ ստանալուց յետոյ ինչպէս են գոշ առաջ  
տանում:

—Աղաւում եմ, Ապրօ էֆէնդի, գոնէ մի յի-  
սուն վաթսուն զրուշ շնորհիր, թէ չէ կինս, երե-  
խաներս քաղցից սովամահ կըլինեն: Նաւատացած  
եղիր, որ ես քու պարտքիդ տակ չեմ մնալ և  
կաշխատեմ մի կերպ երախտահատոյց լինել քեզ:

Ապրօն մտածեց-մտածեց, վերջապէս պա-  
տասխան տուաւ. զլաւ, ես քո մի ամսուայ վարձդ-  
առաջուց կը տամ, միայն այն պայմանով՝ որ դու

ինձանից կըստանաս ընդ ամենը վաթսուն և հինգ զրուշ. իսկ մուրհակ կը տաս որ ստացել ես հարիւր զրուշ։ Համաձայն ես թէ ոչ։

Ել ինչ կարող էր անել Տանջօն.—կանգնեց կանգնեց, երկար ժամանակ մտածեց և վերջապէս մուրհակը տուաւ ու վաթսուն և հինգ զրուշը ստացաւ։

«Ոչինչ, միտք էր անում նա, գոնէ մի առժամանակ կինս և երեխաներս ապահովուած կը լինեն. իսկ այնուհետև ինչ որ լինելու է թող լինի. ով գիտէ, կարելի է բաներս կը յաջողուի; Ես այժմ երջանիկ եմ, շարունակում էր նա ինքն իրեն. բայց մի անորոշ վիշտ ճնշում է սիրտս: Ինձ այնպէս է թուում, որ ես սկսում եմ երկիւղ կրել աղքատութիւնից: Զէ, այդ լաւ բան չէ, այդ շատ վատ բան է...»,

Այն, ընթերցնել, Տանջօն չէր սիսալվում. երջանկութեան մէջ աղքատութեան դառնութիւնը աւելի ևս զգալի է։ Աղքատի համար գժուար չէ մի կտոր հացի համար զոհել իւր մարմինը և արիւնը. իսկ երբ երեկոյեան նա աշխատանքից վերադառնում է տուն, այդ ժամանակ նա իրեն աւելի ևս աղքատ, աւելի ևս թշուառ է գտնում։

Դ.

Տանջօն առաւօտը շուտ վեր կեցաւ, սկսեց ձին մաքրել և ճանապարհի պատրաստութիւն

տեսնել։ Դօնան էլ հացը թխեց, մի քիչ էլ պանիր առաւ և ինչ որ հարկաւոր էր իւր մարդու համար բոլորը հաւաքեց ու մէկտեղ փաթաթեց։ Տանջօի ազգականներն ու ծանօթներն էլ եկան նորան ճանապարհ ձգելու և մնաս բարով ասելու։ Երեխաները քնաթաթախ աչքերով ման էին դալիս կամ մօր կամ հօր շուրջը։ Դօնան արտասուրքը աչքերին կամ մրմնջում էր իւր մարդու հետ և կամ երեխաներին հրելով արտասանում էր «Հեն թողնում որ մարդ մի քիչ միտքը վրան պահէ ու հարկաւոր բաների մասին խօսէ». թէն ամեն բանի մասին նա արդէն հազար անդամ ասել, խօսել էր։

Ահա հասաւ նաև ճանապարհորդի կենացը խմելու և ուտելու ժամանակը։ Դօնան պատրաստել էր խորոված, առել էր օղի, գինի և այդ բոլորը շարել, գրել էր սփռոցի վերայ։ Ամենքը նստոտեցին սփռոցի չորս կողմը և սկսեցին դանազան բարեմաղթութիւններ անել Տանջօին։ Բարեմաղթութիւններից յետոյ, նոքա սկսեցին խօսել թէ ինչքան հեռու է Արգրումը Ստամբուլից, թէ ինչ ահազին շրջապատ ունի Սուլթանի պալատը և ուրիշ այդ տեսակ խնդիրներ։ Այդպիսով նոքա խորովածն էլ կերան, օղին էլ խմեցին, գինին էլ նոցա վրայից, առանց մտածելու թէ ինչ գնով էր գնուած այդ բոլոր պաշարը. նոքա չգիտէին որ այդ ամենը տանտիրոջ աւելի թանգ էր նստել, քան թէ նոյն իսկ Արգրումը և Ստամ-

քոլը, քան թէ Սուլթանի բոլոր պալատները միաւսին վերցրած, այդ ամենը մարդկային կեանքի գնով էր առնուած... Վերջապէս ամեն բան վերջացաւ, բոլորը վեր կեցան նստած տեղերից. Տանչօն երեսին խաչ հանեց, մի մի փարայ հանեց տուեց երեխաներին, համբուրեց նոցա, մնաս բարով արաւ Դօնաի և բարեկամների հետ ու թռաւ ձիու վերայ:

— Գնաս բարով, բարեմաղթեցին ազգականները:

— Բարով վերադառնաս, ասաց Դօնան արտասուալից աշքերով:

Բայց հէնց որ Տանչօն ուզում էր ձին քշել ու հեռանալ, յանկարծ, կարծես գետնի տակից, նորա առաջին բուսաւ քաղաքի զապղիմալը (հարկանշը) և կանչեց. «սպասիր, սիրելիս, այդ ուր ես ճանապարհու ուզզում»:

— Գնում եմ դործի: Նիկօ ախպար, պատասխանեց Տանչօն:

— Այդ ես լաւ գիտեմ. դու այն ասա թէ Երբ ես ուզում հարկի վճարել. երկու տարի է ահա որ դու ոչինչ չես վճարել, և արդէն մի ահաւ գին գումար՝ երկու հարիւր զրուշ է հաւաքուել քո վերայ:

Խեղճ Տանչօի գլխին կարծես սառը ջուր ածեցին. նա աշքերը չուեց, բայց ոշինչ չկարողացաւ արտասանել:

— Ի՞նչ ես լուռ մնացել, սիրելիս, կարծես

վախկոտ նապաստակ լինես, ասաց Նիկօն և բոնեց ձիու սանձը:

— Ես շուտով կը վերադառնամ, Նիկօ ախպար, և հարկաւոր գումարը հետս կը բերեմ... բոլոր պարոքս կը վճարեմ, արտասանեց Տանչօն հազիւ լսելի ձայնով:

Աւելի լաւ է, սիրելիս, խոստմունքների փոխանակ փող տուր, և յետոյ մւր ուզում ես գնա, Աստուած բարի ճանապարհ տայ: Իսկ այդպէս ես քեզ բաց թողնողը չեմ. կամ փողերը հանիր կամ համեցէք բանտը:

— Ի սէր Աստուածոյ, Նիկօ ախպար, բաց թող ինձ, սկսեց ազաշել Տանչօն, Աստուած վկայ որ իմ առաջին հոգսս կը լինի դուրս գալ հարկի տակից. բաց թող, խնդրում եմ, թէ չէ՝ կորած եմ:

— Բաց թողնել ես չեմ կարող, բայց ահա կը վերցնեմ ձիդ և երբոր փողերը կը բերես, կարող ես էլի յետ ստանալ, կամ թէ չէ... համեցէք բանտը, աւելացրեց նա ժպտալով ինչպէս մի անառակ կին: Այնուհետև նա նշան արաւ իրեն հետ եկող սէյմէնին և հրամայեց նորան որ ձին վերցնէ ու տանէ խօնախ (ժատարան): Ո՛չ Տանչօի սպառնալիքները, ոչ Դօնաի արտասունքները և ոչ էլ ազգականների պաղատանքները չկարողացան շարժել Նիկօի սիրտը: Զիոն վերցրին և տարին իւր բեռնովը միասին, որի մէջ փաթաթուած էր դեռ չսառած հացը, պանիրը և Տանչօի միակ շապիկը:

Կորայ, բոլորովին կորայ, աղաղակեց Տանչօն. այժմ Ապրօն էլ իւր փողերը յետ կը պահանջէ... ինչ պէտք է անեմ, տէր աստուած, ինչ պէտք է անեմ... ինչով եմ ես մեղաւոր, ինչումն է իմ յանցանքս: Ես անաղնիւ չեմ, ես ոչ ոքի չարիք չեմ հասցրել, բայց ահա չարչարփում եմ, ահա տանջանքը տիրապետել է ինձ...: Իսկ մենք—մենք մեռնում ենք սովից ու կարօտութիւնից: Ո՞վ նախնիք, ո՞վ հայրենիքի սուրբ պաշտպաններ, դուք դնացիք և այժմ չկայ մէկը, որ փրկէ մեզ անօրէն բռնութիւններից, որ աղատէ մեզ գազանային անգժութիւններից: Ո՞վ սրբազն ժողովրդական կամք, քեզ մոռացել է, քեզ չէ ճանաչում բռնակալների և չարագործների իշխանութեան տակ ստրկացած ժողովուրդը... Մայրեր, ինչու համար էք երկնել և ծնել մեզ, և դու, թշուառ երկիր, ինչու չես խորտակվում մեր խայտառակութեան և ստրկութեան ծանրութեան տակ... ո՞հ ամուսին... ո՞հ սիրելի որդեակիներ...: Այս խօսքերը արտասանելով Տանչօն մի այնպիսի կատաղի ձայն արձակեց, որ բոլոր շրջապատողները սարսուցին. նա չէր լալիս, այլ միայն տենդային ցնցումներով կոտրատում էր ձեռները և բուռնցքներ սխմում:

Ինչպէս որ Տանչօն կարծում էր, այնպէս էլ եղաւ: Տեղեկանալով այդ բոլոր անցքի մասին Ապրօն յետ պահանջեց իւր հարիւր զբուշը և Տանչօնին նստեցրին բան:

Ե.

Այդ բոլոր անցքերի ժամանակ մեր փոքրիկ քաղաքի կառավարիչը կամ զայմագամը Թալիլ էֆէնդին էր. նա այնպիսի մարդ էր, ինչպէս տաճիկների բոլոր աստիճանաւորները. այսինքն՝ ադահ, հեշտասէր, արբեցող, յիմար, անզգայ՝ ինչպէս խոզ, և կատաղի՝ ինչպէս վագը: Գայմադամը ապրում էր հասարակական տան մէջ, որտեղ դըտնվում էին նոյնպէս բանտը և դատարանը: Տան առաջ, փողոցի վերայ, մի բարձր տեղ կառուցած էր քէօշը: Քէօշի կտորը հաստատուած էր չորս գերանի վերայ և ծածկուած էր կղմինտով: Չորս կողմից բաց լինելով՝ նա կահաւորուած էր տաճկական գիւաններով, որոնց վերայ բազմում էին գայմադամը ու չօրբաջիները և չիբուխները ձեռներնին հրամաններ էին արձակում թէ ում ոտքերին որբան հարուած պէտք է տալ, ում հարկի վերայ ինչքան պէտք է աւելացնել և ուրիշ այդ տեսակ խնդիրներ: Տաճկական գաւառներում, ինչպէս յայտնի է, չկան օրինագըրքեր. այնտեղ ամեն բան բերանացի կերպով է կատարվում: Հաւաքվում են չօրբաջիները, աղաները, խօսում են խօսում են և ով որ աւելի զօրաւոր որ հարուստ է, նորա խօսքն էլ օրէնք է դառնում. եթէ վաղը դուրս եկաւ մի ուրիշ աւելի հարուստ, դուրս կը գայ նաև նոր օրէնք: Մէկ անգամ Խալիլը նստած տաճկական ար-

Դարադատութեան այդ երեւլի կայարանում և  
զայանը բերանին դրած, ծուլուէն նայում էր  
իւր մօտից անցնող ժողովրդի վերայ: Նորա կեր-  
պարանքը գոռող էր, դանդաղ և քնաթաթախ:  
Յանկարծ Խալիլի կիսախուփ աշքերը բայցուեցին  
և փայլատակեցին ինչպէս երկու հրավառ ածուխ:  
Նա տեսաւ մի աղջիկ՝ որ մի պնակ ձեռքին դի-  
մում էր գէպի բանտ. այդ աղջիկը փաթաթուած  
էր ցնցոտիների մէջ. բայց նորա թուիս երկայն  
ծամերը շբեղութեամբ թափուում էին նորա ու-  
սերի վերայ, և երկնքի նման վճիտ ու կապոյտ  
աչքերը փայլում էին ինչպէս ամենաքուր փիրու-  
զայի երկու կտորներ:

Խալիլը ձայն տուեց սէյմէններից մէկին և  
նոցա մէջ ոկտուեց հետեւեալ խօսակցութիւնը:

— Ա ում աղջիկն է.

— Տանչօի:

— Ա՞յն Տանչօի, որը պարտքի համար մեզ  
մօտ բանտարկուած է.

— Այս:

— Լաւ, հեռացիր:

Խօսակցութիւնը սորանով էլ վերջացաւ:  
Անցաւ մի շաբաթ: Մէկ երեկոյ Խալիլը կան-  
չել տուեց Տանչօին իւր մօտ և ասում է. «լսիր,  
Տանչօ, արդէն երկու ամիս է որ դու նստած ես  
բանտում, այժմ ժամանակ է դուրս դալու:»

— Ինչ անեմ, ես ինքս էլ ցանկանում եմ

Դուրս դալ... բայց փող ո՞րտեղից դանեմ, պա-  
տասխանեց Տանչօն:

— Ոչինչ, նկատեց Խալիլը, ես քո փոխարէն  
հարիւր զոտշ կը վճարեմ և դու կարող ես ա-  
զատուել բանտից:

Տանչօն, որ երկու ամիս հեծեծում էր բան-  
տարկութեան մէջ, մտարերելով իւր ստրկութիւ-  
նը և խայտառակութիւնը, ընկաւ Խալիլի ոտքե-  
րը և բացականչեց — «ինչո՞վ կարող եմ երախտա-  
հատոյ լինել քեզ: Խալիլ էֆէնդի առանց նորա  
էլ ես քեզ պարտական եմ, որովհետեւ մի քանի  
օր առաջ դու ՚իմ կնոջս էլ փող ես ուղարկել...  
հաւատացիր, ես մինչեւ գերեզմանի դուռը երախ-  
տապարտ պիտի մնամ քեզ... ահա վերցնուր ինձ  
ձրիաբար ծառայութիւն անել քեզ»:

— Ե՞ս, Տանչօ, ինչ հարկաւոր է ինձ քո  
ծառայութիւնդ. առանց քեզ էլ ես շատ ծա-  
ռայներ և աղախիններ ունեմ. աւելի լաւ է,  
ահա ինչ արա. դու ունես մի շատ սիրուն աղ-  
ջիկ, տնիւր նորան ինձ, տնիւր իմ հարեմիս հա-  
մար, և այդ կը լինի ծառայութիւն փոխանակ:

Տանչօն մի բոպէ մնաց շուարած. բայց իս-  
կոյն էլի հպարտութեամբ գլուխը վեր բարձրա-  
ցրեց և ասաց. «Եթէ քեզ, Խալիլ էֆէնդի, այդ  
տեսակ զոհ է հարկաւոր, աւելի լաւ է հրամայիր  
որ նորից ինձ բանտը ձգեն. ես տասը տարի կը  
փթեմ բանտումը և այդ բանը չեմ անիլ... ինչ...

վաճառել իւր սեփական աղջկան... դու խելքդ կորցրեյ ես, թէ ինձ ցած արարածի տեղ ես ընդունում:

Խալիլի մօտ կանգնած էր Նիկօն, մեր քաղաքում եղած բոլոր գայմագամների այդ ամենահաւատարիմ ստրուկը: Լրբութեամբ, ցածութեամբ և անողորմութեամբ նա գերազանցում էր ամեն մի սրիկայից: Խալիլ էֆէնդին առանց Նիկօի ոչինչ չէր անում. իսկ Նիկօն չէր խոշում ամենազազրալի գործերից:

Նիկօն նայեց Խալիլի երեսին. յետոյ դարձաւ Տանչօին և ասաց. «Սխալվում ես: Ես կարծում եմ որ աւելի լաւ կը լինի եթէ համաձայնես աղջկանդ տալ Խալիլ էֆէնդիին, թէ չէ բանդ պրծած է: Դու գիտես որ կինդ էլ Խալիլ էֆէնդիից փողէ վերցրել, և եթէ չվերադարձնէ, նորան էլ քեզ հետ միասին կը նստացնեն բանտ, այն ժամանակ ըստ երեխաները բոլորովին սովաճառ կը լինեն: Ոչ, Տանչօ, աւելի լաւ է համաձայնիր աղջկանդ տալու:

Արտասուքները սկսեցին խեղդել Տանչօին, երբ նա լսեց այդ տեսակ խօսքեր մի հայի, մի քրիստոնէի, մի ընտանիքի հօր բերանից:

—Այս Նիկօ ախպար, մարդ ես դու թէ չար հոգի, բացականչեց Տանչօն: Արդեօք դու հասկանում ես որ ես հայր եմ, և աւելի շուտով կը համաձայնեմ որդիներիս սովամահ անել քան թէ վաճառել նրանց տաճիկներին... աւելի լաւ է

ես իմ ձեռքովս նոցա կը մորթեմ և չեմ մտանիլ այդ տեսակ խայտառակութեան... փոխանակութիշներին այդ տեսակ խորհուրդներից մէկին և լաւն այն է վերցներ ըստ աղջիկներից մէկին և տնը, չէ՞ որ այդ քեզ համար ոչինչ է:

Այդ խօսքերը արտասանելով Տանչօն միտք էր անում — «Ի՞նչ կայ... շատ կարելի է որ դու կը տաս էլ, քեզանից ամեն բան կարելի է սպասել... ագահութիւնը և ցածութիւնը սպանել են քո մէջ ամեն մի մարդկային զգացմունք:

Թող Աստուծոյ անէծքը թափուի այն բոլոր չօրբաջիների, այն բոլոր գատիների, այն բոլոր գայմագամների, այն բոլոր փաշաների, մէկ խօսքով այն բոլոր գարշելի գնդի վերայ, որոնք ամեն մի աղնաւութիւն, ու թիզ կորցրած, ժանտախտի նման աղականում են մեր խեղճ հայրենիքը:

—Ես քո լաւդ եմ ցանկանում, այդ պատճառով եմ խորհուրդ տալիս շարունակում էր Նիկօն:

—Է՞ս Նիկօ ախպար. ՕՇԱՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱՅ ԱՌԱՆՑ ԱՐՏԱՍԱՌՈՒԹԻ ԵՆ ԼԱՅ ԼԻՆՈՒՄ: Ինձ հարկաւոր չեն քո հոգացողութիւնը և արտասուքները. Ես ինքս էլ կարող եմ իմ մասին մտածել. աւելի լաւ է, ի սէր Աստուծոյ հանգիստ թող ինձ:

—Եթէ այդպէս է, եթէ չես համաձայնում, այն ժամանակ ես ըստ կնոջ հետ կը խօսեմ. նա

քեզանից աւելի կակուղ կը լինի։ Քաղցածութիւնը հանաք բան չէ։ Քո կինդ շատ լաւ է հասկանում թէ ինչ է նշանակում առանց հացի ապարել։ Նա ինքը իւր ձեռքովը կը բերէ աղջկանդ, ասաց Խալիլը, ծուխի քուլաները բերանից դուրս թողնելով։

— Ո՛չ, իմ կինս այդ տեսակ բան չի անիլ. կը գտնուին էլ բարի մարդիկ, որոնք չեն թողնիլ որ դու այդպէս հարստահարես աղքատներին։ Իսկ եթէ դու կը շարունակես հարստահարել մեզ, եթէ մեք փաշայի մօտ արդարադատութիւն չենք գտնիլ այն ժամանակ մենք Սուլթանին իրեն կը դիմենք…։

— Հա, հա, հա, ծիծաղեց Խոլիլը… զեավուրի համար Սուլթանը շատ հեռու է։

— Դու թէկուղ ճակատովդ երկաթէ պատերը խորտակիր, Սուլթանի մտքովն էլ չի անց կենալ՝ որ դու կամ աշխարհքում թէ ոչ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԱԻՎՈՅԵԱՆԻ

Գինն է կոպ.

1. Խօլեր	.	.	.	.	5
2. Խրիմեան Հայրիկ	.	.	.	.	20
3. Պանդուխտ պատանի (սպառուած)	.	.	.	.	70
4. Պ. Դուրեանի բանաստեղծութիւնները	.	.	.	.	20
5. Աստուած գիտէ արդարն ու մեղաւորը, բայց գատաստանը շուտ չի անում. լ.	.	.	.	.	
Սօլստոյի	.	.	.	.	5
6. Երեք մահ լ. Սօլստոյի	.	.	.	.	5
7. Ճշմարտութիւն	.	.	.	.	5
8. Շամախու աղէտը.	.	.	.	.	20
9. Պետ. Դուրեանի բանաստ. և տպագր.	.	.	.	.	20
10. Պատկերներ Մաֆֆու կեանքից	.	.	.	.	40
11. Երգիծաբանակ. Հատուածներ Պարոնեանի	.	.	.	.	5
12. Որտեղ կայ սէր, այնտեղ է և Աստուած լ. Սօլստոյի	.	.	.	.	5
13. Եղբայրը եղբօրը գէմ վ. Հիւզօի	.	.	.	.	10
14. Հարսնացու և փեսացու	.	.	.	.	5
15. Ուրիշի գերեզմանի վրայ առանց ար- տասուքի հն լաց լինում	.	.	.	.	10
Որոնք կը պահանջեն մէկ-մէկ օրինակ ճա- նապարհածախուը ուղարկողի վրայ. իսկ գումարով ցանկացողներին 20 զեղջ ճանապարհածախոով. Մեր հասցէն.	.	.	.	.	

Տիֆլոս, ուлицա Բրոսս, № 23, Ա. Ա. Օվանեսյանը.

Գինն է 10 կոպ.

Շուտով լրյա կտեսնեն

1. ԱՐԵԱՆ ԶԱՅՆ

Գինն է 50 կ. ճանապարհածախոով

2. ԻՆՉ է ԱԶԳՈՒԹԻՒՆԸ

Երնեստ Ռընանի գաստիօսած 1882 թ. Սօրբո-  
նում և Շարլ-Բէզօյի պատասխանը նոյն հարցի  
վերաբերմամբ:

Գինն է 40 կ. ճանապարհածախոով

ՀՀ Ազգային գրադարան



NL0340975

